ՆԱԽԱԳԻԾ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսանողների մանկավարժական պրակտիկայի թղթապանակը (այսուհետ՝ թղթապանակ) լրացվում է ուսանողի կողմից և ծառայում նրա մասնագիտական աճի պլանավորման, գնահատման միջոց: Թղթապանակն արտացոլում է ուսանողների գործունեությունը, մասնագիտական ձեռքբերումներն ու աճի դինամիկան, ինչպես նաև նրա վերլուծությունները, ինքնագնահատումներն ու գնահատումները:

2. Սույն ընթացակարգը ենթակա է պարբերական գնահատման և վերանայման տարեկան մեկ անգամ՝ հիմք ընդունելով տվյալ ուսումնական տարում մանկավարժական պրակտիկայի ընթացքում դրա կիրառման արդյունավետությունը: Ընթացակարգը հաստատում, գնահատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարում է ՀՊՄՀ գիտական խորհուրդը:

3. Սույն ընթացակարգով սահմանվում են ՀՊՄՀ-ում ուսանողների մանկավարժական պրակտիկայի թղթապանակի կիրառման, պրակտիկայի կողմնորոշիչ և ամփոփիչ կոնֆերանսների անցկացման և պրակտիկայի արդյունքում ուսանողների ձեռքբերած կոմպետենցիաների գնահատման հետ կապված հարաբերությունները:

4. Ուսանողների պրակտիկայի թղթապանակի կիրառման ընթացակարգերի ներդրումը նպատակ ունի զարգացնելու սովորողների ուսումնական ձեռքբերումները և մասնագիտական կոմպետենցիաները մանկավարժական պրակտիկայի գործընթացի, ինչպես նաև դրա հետ կապված այլ գործընթացների (պրակտիկայի կոնֆերանս, պրակտիկայի գործունեության պլանավորում և այլն), գնահատման, բարելավման և զարգացման միջոցով:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

5. Սույն կարգով նախատեսվում է բակալավրի կրթական ծրագրով մանկավարժական պրակտիկան իրականացնել շարունակականության և հաջորդականության սկզբունքներով, մասնագիտական կոմպետենտության աստիճանական զարգացման մեխանիզմով, երեք շրջափուլերով (տեսակներով)[1]:

ա) 1-ին շրջափուլ՝ “**Ուսումնաճանաչողական պրակտիկա**”, որը նախատեսվում է իրականացնել բակալավրի կրթական ծրագրի բոլոր մանկանարժական մասնագիտությունների գծով:

---

[1] Պրակտիկայի ժամկետները և բովանդակությունը սահմանվում են մանկավարժության մասնագիտական կրթական ծրագրով/ ծրագրերով/, չափորոշիչներով և այլ փատաթղթերով:

բ) 2-րդ շրջափուլ՝ ″**Կիրառական պրակտիկա″**, որը նախատեսված է դպրոցի ուսումնադաստիարակչական, արտադասարանական աշխատանքների, տարբեր կրթական ծառայությունների իրականացմանը, ինչպես նաև մանկավարժական գործընթացների և ուսուցչի (դաստիարակի, հոտուկ մանկավարժի, հոգեբանի, սոցիալական մանկավարժի) աշխատանքների պլանավորման, ուսուցման գործընթացի նախագծման և նախապատրաստման աշխատանքներին ծանոթացնելու և մասնակցություն ցուցաբերելու համար:

գ) 3-րդ շրջափուլ՝ **Ամփոփիչ-գնահատող պրակտիկա**, որը նախատեսվում է կազմակերպել բակալավրի կրթական ծրագրի բոլոր մանակավարժական մասնագիտությունների ավարտական կուրսի առաջին կիսամյակում:

6. ՀՊՄՀ-ում Մագիստրոսի կրթական աստիճանի ծրագրով նախատեսվում է կազմակերպել ուսանողների մանկավարժական պրակտիկայի երկու տեսակ՝ մանկավարժական-դասախոսական և հետազոտական:

ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

7. Թղթապանակի բովանդակությունը սահմանվում է սույն ընթացակարգի հավելված 1-ով և բխում է կրթական ծրագրի առանձնահատկություններից[2]:

8. Թղթապանակը պետք է ունենա հավելված 1-ով սահմանված համապատասխան ձևի տիտղոսաթերթ:

9. Ուսանողը թղթապանակի վերջում պետք է ունենա ինքնագնահատման և գնահատման համար նախատեսված բաժին, որտեղ կներկայացվեն իր, ղեկավար-մեթոդիստի, մանկավարժի, հոգեբանի, առարկայի դասավանդող ուսուցչի (դաստիարակի, հատուկ մանկավարժի, հոգեբանի, սոցիալական մանկավարժի) կամ ընկերների դիտարկումներն ու գնահատականները հետադարձ կապի տեսքով:

10. Թղթապանակի առաջին մասը նախատեսված է “**Իմ կրթության փիլիսոփայությունը**” էսսե գրելու համար, որը կատարվում է պրակտիկայի նախապատրաստական կոնֆերանսի ընթացքում և ենթակա է բարելավման պրակտիկայի ամբողջ ժամանակահատվածում:

11. Մինչ պրակտիկայի սկիզբը ուսանողների կողմից պետք է իրականացվի նախնական գնահատում՝ ըստ ներկայացված ձևաչափի, որը հետագա հիմք է մասնագիտական զարգացման գնահատման համար:

12. Թղթապանակից բացի ուսումնառողները կարող են ունենալ իրենց մոտ այլ փաստաթղթեր՝ մեթոդական հանձնարարականներ, ուղեցույցներ, որոնք սահմանված են տվյալ մասնագիտական կրթական (և կամ պրակտիկայի) ծրագրով կամ պարտադիր են տվյալ կրթական հաստատության սովորողների համար:

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԵՎ ԱՄՓՈՓԻՉ ԿՈՆՖԵՐԱՆՍ

13. Պրակտիկայի կողմնորոշիչ և ամփոփիչ կոնֆերանսների կազմակերպման և անցկացման ձևաչափը սահմանվում են սույն ընթացակարգի հավելված 2-ով:

---

[2] Այստեղ ներկայացված թղթապանակի ձևը կարող է տարբերվել տարբեր մասնագիտություններով սովորողների մոտ: Սակայն պետք է պահպանել դրա ընդհանուր մոդելը:

14. Պրակտիկայի կողմնորոշիչ կոնֆերանսը կազմակերպվում է յուրաքանչյուր շրջափուլի պրակտիկայից առնվազն 10 օր առաջ:

15. Պրակտիկայի ամփոփիչ կոնֆերանսը կազմակերպվում է յուրաքանչյուր շրջափուլի պրակտիկայից ավարտից առնվազն 7 աշխատանքային օր հետո և 10 աշխատանքային օրից ոչ ուշ:

16. Պրակտիկայի կողմնորոշիչ սեմինարի ընթացքում նախատեսվում է իրականացնել թիմային աշխատանքի պլանավորում, որն իրականացվում է խմբի առաքելության սահմանման և խմբի անդամների կրթության փիլիսոփայության հիման վրա:

17. Թիմային պլանի վերհանումը համակարգում է պրակտիկայի մեթոդիստ-ղեկավարը: Այդ գործընթացինն պետք է անպայման մասնակցեն նաև տվյալ աշխատանքային խմբում ներգրավված մանկավարժը, հոգեբանը և պրակտիկայի հիմնարկի /ուսումնական հաստատության/ ներկայացուցիչը:

18. Թիմային աշխատանքի պլանի հիման վրա անհրաժեշտ է իրականացնել անհատական պլանավորում: Այստեղ, կախված հաստատությունում ընդունված պրակտիկայի ձևից, այն կարող է լինել տարբեր բովանդկությամբ:

19. Անհատական պլանավորումը պետք է համապատասխանի թիմային պլանին և նպաստի ամբողջ խմբի գործունեության արդյունավետությանը:

20. Հոգեբանի մասնակցությունը կոնֆերանսներին և պրակտիկայի գործընթացին պետք է ուղղված լինի ուսանողի մասնագիտական ռեֆլեքսիայի և անհատական ռեսուրսների պլանավորմանն ու նպատակադրման կարողությունների զարգացմանը:

21. Մանկավարժի մասնակցությունը պետք է ուղղված լինի համագործակցային ուսումնառության, ակտիվ ուսուցման մեթոդների, դրանց կիրառման ընթացքում մանկավարժական պայմանների նկատմամբ ճիշտ հսկողություն իրականացնելուն:

22. Թիմային և անհատական աշխատանքի պլաններում պետք է մանրամասնորեն և հստակորեն արտացոլվեն բոլոր այն քայլերը, որոնք ներկայացված են թղթապանակի ձևաչափում (“Ընդհանուր գաղափար պրակտիկայի հիմնարկի մասին”, “Իմ գործունեությունը պրակտիկայի ընթացքում”, Ինքնագնահատում և գնահատում” բաժիններում) Անհրաժեշտության դեպքում, կարող են ներառվել նաև կրթական ծրագրից բխող այլ քայլեր ևս՝ դրանք համաձայնեցնելով պրակտիկայի ղեկավարի (մեթոդիստի հետ):

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

23. Թղթապանակում արտացոլված պրակտիկայի ընթացքում ուսանողի գործունեությունը ենթակա է ընթացիկ պարբերական և ամփոփիչ, ինչպես նաև կոմպետենտության և վերջնական գնահատման:

24. Ընթացիկ գնահատումը իրականացվում է թղթապանակում նախատեսված մասերում, ուսանողի ինքնագնահատումից հետո, հետադարձ կապի միջոցով կատարվող առաջարկությունների և մեկնաբանությունների տեսքով:

25. Կոմպետենցիաներով գնահատումն իրականացվում է նախապես, ամփոփիչ կոնֆերանսից հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, կրթական ծրագրով մշակված կրթական վերջնարդյունքների դիտարկման հիման վրա, որոնք գնահատման թերթիկի ձևանմուշում ներկայացված են կոմպետենցիաների տեսքով (Հավելված 3):

26. Կոմպետենցիաների գնահատման թերթիկի լրացումը պարտադիր է պրակտիկայի գործընթացում ներգրավված մանկավարժի, հոգեբանի պրակտիկայի հիմնարկի պատասխանատուի և մեթոդիստի կողմից: Անհրաժեշտության դեպքում կոմպետենցիաների գնահատման թերթիկով կարող է իրականացվել նաև ինքնագնահատում պրակտիկանտի կողմից:

27. Կոմպետենցիաների գնահատման թերթիկը հիմք է ծառայում պրակտիկայի ամփոփիչ գնահատման համար:

28. Պրակտիկայի ամփոփիչ գնահատումն իրականացնում է պրակտիկայի մեթոդիստ ղեկավարը:

29. Պրակտիկայի ամփոփիչ գնահատման ձևաչափը սահմանվում է սույն կարգի հավելված 4-ով:

30. Պրակտիկայի ամփոփիչ գնահատման համար սահմանվում են բուհում գործող գնահատման չափանիշները,

31. Գնահատումն իրականացնում է մեթոդիստ-ղեկավարը՝ խորհրդակցելով պրակտիկայի տվյալ շրջափուլում ներգրավված մասնագետի կամ մասնագետների հետ (մանկավարժի, հոգեբանի, ուսումնական հաստատության ներկայացուցչի):

32. Պրակտիկայի մեթոդիստ ղեկավարը, մանկավարժը. հոգեբանը գնահատումից առաջ պետք է թղթապանակում հստակ նշումներ կատարեն ուսանողի կատարած աշխատանքի գնահատման վերաբերյալ, կոնկրետ նշելով աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը, անհրաժեշտության դեպքում ներկայացնելով առաջարկներ՝ աշխատանքի բարելավման ուղղությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՆՄՈՒՇ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Լուսանկարի
Տեղ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԹՂԹԱՊԱՆԱԿ

Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն

ֆակուլտետ, բաժին

Լրացման վայրը, Պրակտիկայի սկիզբը և ավարտը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԷՍՍԵ "ԻՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ':

1.1. Ինչպես եմ ես տեսնում ինձ ուսուցչի, դաստիարակի, հատուկ մանկավարժի կամ հոգեբանի դերում,

1.2. Ինչ համոզմունքների և արժեքների վրա է հիմնվում իմ կրթական փիլիսոփայությունը,

1.3. Որն է սովորելու իմ գաղափարը, հայեցակարգը (կոնցեպցիան),

1.4. Ինչպես եմ ես տեսնում ինքս ինձ որպես մասնագիտական խմբի մաս,

1.5. Որն է հասարակության մեջ իմ, որպես մասնագետի դերի գաղափարը(պատկերացումը,

1.6. Ինչպես եմ ես մեկնաբանում և իրականացնում ուսումնական ծրագիրը,

1.7. Ինչ սպասելիքներ ունեմ ես իմ ապագա աշխատանքից:

2. ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

2.1. Իմ ձեռքբերումները որպես մասնագետ,

2.2. Իմ կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակները որպես մասնագետ

2.3. *Իմ կոմպետենտությունը և դրա զարգացման հնարավորությունները,*

2.4. Որոնք են իմ մասնագիտական ուժեղ)թույլ կողմերը,

2.5. Ինչպես եմ ուզում զարգանալ որպես մասնագետ,

2.6. Ինչ նպատակներ եմ դնում առաջիկա պրակտիկայի համար,

2.7. Որքանով են իրականացել իմ նախորդ նպատակները:

ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՔԱՐՏԵԶ (ԻՆՉ, ՈՎ, ԻՆՉՊԵՍ, ԵՐԲ, ՈՐՏԵՂ)

2.8. Պրակտիկայի թիմային աշխատանքի պլանը «Ութ քայլ» իրավիճակային վերլուծության տեխնոլոգիայի կիրառմամբ

2.9. Մեթոդական նյութեր, ուղեցույցներ, ցուցումներ, հուշագրեր, ծանոթագրություններ և այլն:

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ (ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ) ՊԼԱՆ

(մշակվում է յուրաքանչյուր շրջափուլի կողմնորոշիչ սեմինարի ընթացքում, լրամշակվում՝ պրակտկայի ընթացքում**)**

3.1. Նպատակադրում, աշխատունակության, անձնային և մասնագիտական ռեսուրսների պլանավորում,

3.2. Ուսումնական և հետազոտական ռեսուրսներ (մեթոդներ, մեթոդիկաներ, տեխնոլոգիաներ, դիդակտիկ նյութեր, այլ),

3.3. *Պրակտիկայի ժամանակացույց (տրամադրում է պրակտիկայի ֆակուլտետի ղեկավարը):*

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

4.1. Կազմակերպության գտնվելու վայրը, հասցեն, հեռախոսահամարները,

4.2. Կառավարման և վարչատնտեսական համակարգը (առաքելությունը, մարդկային և նյութական ռեսուրսներ, դասարաններ իրավական նորմատիվ փաստաթղթեր, կազմակերպչական մշակույթ, հասարակական հարաբերությունների համակարգը, դասավանդողներ և ուսումնառողներ և այլն),

4.3. *Կազմակերպության ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն:*

5. ԻՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ[3]

5.1. Դիտումներ,

5.2. Վերլուծություններ,

5.3. Եզրակացություններ,

5.4. Առաջարկներ,

5.5. Իմ պլաններն ու զեկույցները (կոնսպեկտ պլաններ),

5.6. Լրացուցիչ դիդակտիկ և այլ նյութեր,

5.7. Հոգեբամանկավարժական բնութագրեր և վերլուծություններ (անհատական, խմբի դասապրոցեսի, այլ. որոշվում է անհատական պլան մշակելու ընթացքում՝ պրակտիկայի նպատակների հիման վրա):

6. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ[4]:

7. ԷՍՍԵ "ԻՄ ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ":

---

[3] Այս բաժնի յուրաքանչյուր ենթակետին վերաբերող նյութերը (օրինակ. նկարներ, դասի պլան և այլն) պետք է պարունակեն հակիրճ բացատրություն)նկարագիր (օր. ինքնագնահատման ձևով), թե ինչու եք Դուք կարևորում այն և կցում Ձեր թղթապանակին: Դուք կարող եք ընդգրկել նաև Ձեր պրակտիկայի ղեկավարների և դասախոսների կողմից կատարված ցանկացած մեկնաբանություններ, արձագանք կամ գնահատումներ:

[4] Այս բաժինը նախատեսված է պրակտիկայի ամփոփիչ ինքնագնահատման և գնահատման համար, որն իրականացվում է պրակտիկայի մասնակիցների կողմից: Ինքնագնահատման ժամանակ առաջարկվում է մտորել և ներկայացնել սեփական աշխատանքի գնահատման չափանիշների, դրանց ուժեղ և թույլ կողմերի, վտանգների և նպաստավոր հնարավորությունների մասին: Պրակտիկայում ներգրավված մասնագետները այդ ինքնագնահատման արդյունքների հիման վրա պետք է տրամադրեն հետադարձ կապ աշխատանքի գնահատման և բարելավման ուղղությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ՁԵՎ Ա

Պրակտիկայի կողմնորոշիչ կոնֆերանսի օրակարգ

1. **ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ՝** Ողջույնի խոսք

2.Կլոր սեղան “Պրակտիկայի մասնակիցների պահանջների վերհանում”:

3. *ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ՝*
Տեղեկատվություն պրակտիկայի վայրի**,** պրակտիկայի գործընթացի պլանավորման, իրականացման, գնահատման, ժամանակացույցի մասին, բաշխիչ նյութեր (պորտֆոլիոյի ձևաչափ, պրակտիկայի ծրագիր, քարտեզ և այլն):

4. *ՀՈԳԵԲԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺ՝*
ա) ռեֆլեքսիվ տեխնոլոգիաները մանկավարժական պրակտիկայում,
բ) համագործակցային ուսումնառության տեխնոլոգիաներ:

5. *ՄԵԹՈԴԻՍՏ-ՂԵԿԱՎԱՐ՝*
ա) Դասավանդման մեթոդների, ուսումնահետազոտական ռեսուրսների համառոտ ներկայացում (դասընթացի ծրագրի ստեղծում)
բ) Պրակտիկայի պորտֆոլիոյի ձևաչափի ներկայացում և քննարկում, անհատական ուսումնական կամ հետազոտական պլանի մշակում
գ)Պրակտիկայի ծրագրի ներկայացում:

Տնային առաջադրանք. Էսսե “Իմ կրթության փիլիսոփայությունը” “Իմ պատկերացումները կրթության մասին”, “Մասնագիտական կայացման իմ կոնցեպցիան” և այլն:

Ձև Բ

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓԻՉ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱԳԻԾ

1. **ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ՝** Ողջույնի խոսք

2.Կլոր սեղան “Պրակտիկայի գործընթացի խմբային քննարկում”

3. Թիմային աշխատանքների ներկայացումներ

4. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ ”Պրակտիկայի գործընթացի ՈՒԹՀՎ Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծություն”

5. Հետադարձ կապ: Ազատ ելույթներ

6. **ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ՝** Կոնֆերանսի ամփոփում:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Ձև Ա

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՈՒՍԱՆՈՂԻ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ[5]
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հարգելի գործընկեր,

Խնդրում ենք գնահատել _____
ֆակ-ը, մասնագիտությունը, կուրսը, բակալավր, մագիստրոս

ուսանող-պրակտիկանտ _____-ի
ազգանուն, անուն հայրանուն

_____ պրակտիկայի ընթացքում դրսևորած վարքագիծն ու
պրակտիկայի տեսակը

կարողությունները[6]՝ հիմք ընդունելով ստորև բերվող կոմպետենցիաների ցանկը:

ՀՈՒՇԱԳԻՐ

Գնահատման ժամանակ օգտվեք առաջին տողի վերջին չորս սյունակներում նշված A B C D չափանիշներից և նշում կատարեք կոնկրետ կոմպետենցիաների նկարագրության համապատասխան տողի այն սյունակում, որը ձեր կարծիքով առավել համարժեք է արտահայտում ուսանողի ձեռք բերած կոմպետենցիաները:

Աղյուսակի վերջին տողում անհրաժեշտ է նշել կոմպետենցիաների միջին գնահատականը: Կրթական ծրագիրն ավարտելուց հետո ֆակուլտետի ղեկավարն իրականացնում է միջին ամփոփիչ գնահատում:

---

[5] Լրացվում է մեթոդիստի, հոգեբանի, մանկավարժի, պրակտիկայի կազմակերպության պատասխանատու մասնագետի կողմից, որի հիման վրա իրականացվում է գնահատում համալսարանում գործող գնահատման չափանիշներով:

[6] Գնահատման ընթացքում անհրաժեշտ է ուսանողին համեմատել մյուսների հետ, այսինքն կիրառել հարաբերական, այլ ոչ թե բացարձակ գնահատում:

Դրակտիկայի տեսակը	Կոմպետենցիայի նկարագրությունը	Արտահայտվել է առավել չափով	Արտահայտվել է միջին չափով	Արտահայտվել է առավել չափով	Չի արտահայտվել
		A	B	C	D
Ուսումնաճանաչողական պրակտիկա	Կարող է պլանավորել մանկավարժական հաղորդակցումը				
	Ընդունում է դպրոցը որպես հոգեբանական միջավայր՝ ուսումնական գործընթացի տեսանկյունից:				
	Գիտի դպրոցի և աշակերտների վերաբերյալ համապատասխան հոգեբանական և մանկավարժական ինֆորմացիան:.				
	Կարող է աշխատել անատոմիական և հոգեբանական փոփոխություններ, ինչպես նաև մտավոր, վարքային և ինտելեկտուալ զարգացման խնդիրներ ունեցող սովորողների հետ:				
	Կարող է ճանաչել, քննարկել և մեկնաբանել հոգեբանական և մանկավարժական ինֆորմացիան , որը վերապատրաստման ընթացքում հավաքել և տեղադրել է թղթապանակի մեջ:				
	Տիրապետում է համապատասխան փաստերը, երևույթներն ու գործընթացները, ինչպես նաև իր գործողությունները մանկավարժական բազային հասկացություններով, սկզբունքներով և կանոններով նկարագրելու կարողության:				
Միջին գնահատական					
Դիրեկտիվ պրակտիկա	• Կարող է պլանավորել և անցկացնել դասընթացները:				
	• Կարող է փոխել իր ուսուցման ձևը՝ հետադարձ կապերին համապատասխան:				
	• Կարող է իրականացնել մանկավարժական հաղորդակցում:				
	• Ունի քննադատական մտածողության ունակություն հոգեբանության և մանկավարժության ոլորտներում:				
	• Ունի թիմային աշխատանքի և համագործակցության կարողություններ:				
Միջին գնահատական					
Ամփոփիչ գնահատողական պրակտիկա	• Գիտի ուսուցչի պարտականություններն ու կոմպետենցիաները:				
	• Տիրապետում է կրթական գնահատման գործիքներին:				
	• Կարող է դասարանում և դպրոցում ինքնուրույն աշխատել որպես ուսուցիչ				
	• Ունի բազմամասնագիտական թիմում աշխատելու կարողություն:				
	• Տիրապետում է պրոբլեմային ակտիվ և համագործակցային ուսումնառության կազմակերպման կարողություններին:				
Միջին գնահատական					
Միջին ամփոփիչ գնահատական					

_____ *“_____” _____ 20__ թ.*

մասնագետի Ա.Ա.Հ., ստորագրություն ամսաթիվ, ամիս, տարեթիվ

ՁԵՎ Բ

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՈՒՍԱՆՈՂԻ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ[7]
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հարգելի գործընկեր,

Խնդրում ենք գնահատել _____
ֆակ-ը, մասնագիտությունը, կուրսը, բակալավր, մագիստրոս

ուսանող-պրակտիկանտ _____-ի
ազգանուն, անուն հայրանուն

_____ պրակտիկայի ընթացքում դրսևորած վարքագիծն ու
պրակտիկայի տեսակը

կարողությունները[8]՝ հիմք ընդունելով ստորև բերվող կոմպետենցիաների ցանկը:

ՀՈՒՇԱԳԻՐ

Գնահատման ժամանակ օգտվեք առաջին տողի վերջին չորս սյունակներում նշված A B C D չափանիշներից և նշում կատարեք կոնկրետ կոմպետենցիաների նկարագրության համապատասխան տողի այն սյունակում, որը ձեր կարծիքով առավել համարժեք է արտահայտում ուսանողի ձեռք բերած կոմպետենցիաները:

Աղյուսակի վերջին տողում անհրաժեշտ է նշել կոմպետենցիաների միջին գնահատականը: Կրթական ծրագիրն ավարտելուց հետո ֆակուլտետի ղեկավարն իրականացնում է միջին ամփոփիչ գնահատում

---

[7] Լրացվում է հոգեբանի, մանկավարժի, պրակտիկայի կազմակերպության պատասխանատու մասնագետի և ուսանողի կողմից, որի հիման վրա մեթոդիստն իրականացնում է գնահատում համալսարանում գործող գնահատման չափանիշներով:

[8] Գնահատման ընթացքում անհրաժեշտ է ուսանողին համեմատել մյուսների հետ, այսինքն՝ կիրառել հարաբերական, այլ ոչ թե բացարձակ գնահատում:

Դրակտիկայի տեսակը	Կոմպետենցիայի նկարագրությունը	Արտահայտվել է առավել չափով	Արտահայտվել է միջին չափով	Արտահայտվել է առավել չափով	Չի արտահայտվել
		A	B	C	D
Մանկավարժական-դասախոսական	Գիտի կրթության բովանդակության ընտրության, առարկայական ծրագրերի, դրանց կառուցվածքային բաղադրիչների նախագծման, մշակման, ուսուցման գործընթացի պլանավորման, կազմակերպման, իրականացման և գնահատման մեթոդները, տեխնոլոգիաներն ու ընթացակարգերը:				
	Կարող է դրսևորել պատասխանատվության և նախաձեռնողականության մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի նախագծման, պլանավորման և իրականացման ու գնահատման ոլորտներում,				
	Կարող է դրսևորել համագործակցություն մասնագիտական գործունեության և խնդրահարույց իրադրությունների կարգավորման ընթացքում				
	Կարող է պատրաստ լինելհարմարվելու նոր իրադրություններին, անսովոր պայմաններում ու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, որոշումներ ընդունելու,				
	Տիրապետում է Ինքնավերլուծության և ինքնակարգավորման կարողությունների				
	Տիրապետում է Կրթական գործընթացի կազմակերպման կարողություններին				
Միջին գնահատական					
Հետազոտական պրակտիկա	- Կարող է ինքնուրույն պլանավորել, նախագծել և իրականացնել գիտափորձեր տվյալներ մշակելու, արդյունքների ձևակերպման կարողություն				
	կարող է իրականացնել հետազոտության տվյալների վերլուծություն, համադրություն և ամփոփում				
	Կարող է ինֆորմացիոն տեխնոլոգիաների միջոցով ինքնուրույն պլանավորել և իրականացնել մասնագիտական և հարակից գիտությունների ոլորտում կուտակված գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացը:				
	Տիրապետում է ժամանակակից փորձասարքերի և գործիքների մասնագիտական շահագործման ունակություններ:				
	Տիրապետում է հոգեբանամանկավարժական հետազոտության ժամանակակից մեթոդներին և դրանց կիրառման ընթացակարգերին				
Միջին գնահատական					
Միջին ամփոփիչ գնահատական					

_____ “____” _____ 20 թ.

մասնագետի Ա.Ա.Հ., ստորագրություն ամսաթիվ, ամիս, տարեթիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵԹԻԿ

Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն_____

Ֆակուլտետ_____Մասնագիտություն_____

	Պրակտիկայի, տեսակը վայրը և ժամանակահատվածը	Նշում պրակտիկան հանձնելու մասին	Նշում վերահանձնման մասին
Բակալավրի ԿԾ	1-ին մակարդակ Ուսումնաճանաչողական	_____ Մեթոդիստի Ա.Ա.Հ. _____ միավոր ստորագր. ամսաթիվ	_____ Մեթոդիստի Ա.Ա.Հ. _____ միավոր ստորագր. ամսաթիվ
	2-րդ մակարդակ Կիրառական	_____ Մեթոդիստի Ա.Ա.Հ. _____ միավոր ստորագր. ամսաթիվ	_____ Մեթոդիստի Ա.Ա.Հ. _____ միավոր ստորագր. ամսաթիվ
	3-րդ մակարդակ Ամփոփիչ գնահատողական	_____ Մեթոդիստի Ա.Ա.Հ. _____ միավոր ստորագր. ամսաթիվ	_____ Մեթոդիստի Ա.Ա.Հ. _____ միավոր ստորագր. ամսաթիվ
Մագիստրոսի ԿԾ	4-րդ մակարդակ Մանկավարժական	_____ Մեթոդիստի Ա.Ա.Հ. _____ միավոր ստորագր. ամսաթիվ	_____ Մեթոդիստի Ա.Ա.Հ. _____ միավոր ստորագր. ամսաթիվ
	5-րդ մակարդակ Հետազոտական	_____ Մեթոդիստի Ա.Ա.Հ. _____ միավոր ստորագր. ամսաթիվ	_____ Մեթոդիստի Ա.Ա.Հ. _____ միավոր ստորագր. ամսաթիվ

Ֆակուլտետի դեկան _____

Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար _____